**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**23.12.2022թ. կնքված N «ԵՔ-ՄԱԾՁԲ-23/16» գնման պայմանագրի**

ք. Երևան «25» սեպտեմբերի 2023թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Նազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 23.12.2022թ. կնքված N «ԵՔ-ՄԱԾՁԲ-23/16» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 11.09.2023 թվականի Ն/47097-23 գրությունը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման գինն ավելացնել 2002000 (երկու միլիոն երկու հազար) ՀՀ դրամով և Պայմանագրի 4.1 կետով սահմանված ընդհանուր գինն սահմանել մինչև 3822000 (երեք միլիոն ութ հարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամ:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ |
| ք. Երևան, Արգիշտի փ. 1 | ք. Երևան, Էրեբունի 6/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության Գործառնական վարչություն | «Արարատբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900052000396 | ՀՀ 1510036375930100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02523863 |
| Վ. Պապիկյան ____________ (ստորագրություն) Կ.Տ | Հ.Նազարյան ____________ (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված թիվ 1
23.12.2022թ. կնքված N «ԵՔ-ՄԱԾՁԲ-23/16» գնման պայմանագրի
«25» սեպտեմբերի 2023թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 98371100/550 | թաղման ծառայություններ | ------ | ------ | ------ | ------ | ------ | ------ | ------ | ------ | 2002000 | 2002000 | 2002000 | 2002000 | 2002000 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
ՀՀ 900052000396
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ
ք. Երևան, Էրեբունի 6/1
«Արարատբանկ» ՓԲԸ
ՀՀ 1510036375930100
ՀՎՀՀ 02523863

Հ.Նազարյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.